Արձանագրություն N 2

«ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ճամբարակ,Գ.Նժդեհի 125

սկիզբ «20» «05» 2026թ.
ժամը 16:30
ավարտ «22» «05» 2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Ստեփանյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Վան Գաբրիելյան/ԳԱ/, Համլետ Արամյան /ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Մարկոսյան/ԳՀ/

1.Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

(Արտակ Ստեփանյան)

Ընդունել ի գիտություն,որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2026 թվականի մայիսի 20-ին, ժամը 16:00-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Արտակ Ստեփանյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 2 /երկու / մասնակից/ներ/

հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	4Ա ԿԱՊԻՏԱԼ ՍՊԸ	Ազատության պ. 12/2 շ. Բն. 50,0014,Երևան,Հայաստան,հեռ.077 177 911,www.davit.sokhakyan@gmail.com
4	«Շինտեխնիկա» ՍՊԸ	Գեղարք.մարզ,ք.Ճամբարակ,Տ.Մեծի 7,շ 9,հեռ.093840494,www.shinarar2023@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Արտակ Ստեփանյան)

3.1 Գնանշման հարցման մրցույթիգնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկ/ները/.

հ/հ	Մասնակցի անվանումը	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով	Հայտի ապահովման առկայություն
1	«4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ	Ճամբարակ քաղաքի ֆուտբոլի դաշտի հարակից տարածքի ցանկապատի վերակառուցման,վոլեյբոլի և բասկետբոլի դաշտերի կառուցման աշխատանքներ	67 715 993	48 750 000	9 750 000	58 500 000	Առկա է,համապատասխանում է
2	«Շինտեխնիկա» ՍՊԸ			55 595 000	11 119 000	66 714 000	Առկա է,համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին,դրանց համապատասխան կազմված լինելու և հայտ/երի/ գնահատման մասին:

(Արտակ Ստեփանյան)

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց,որ՝

Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է /են/ **ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,բացառությամբ՝

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է,որ Ձեր ներկայացված հայտում՝

«4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ ներկայացված գնանշման հարցման մրցույթի հարցմանը մասնակցելու: Մասնավորապես.

- Հրավերի հավելված 1-ում գնման ձևի անվանումը սխալ է գրված, «գնանշման հարցման» փոխարեն գրվել է «բաց մրցույթ»: Չափաբաժնի համարը սխալ է գրված ,«1-ին»-ի փոխարեն գրված է «100%»:Իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է կցված:
- Հրավերով սահմանված էր կցել լիցենզիան՝ իր ներդիրով: Սակայն փաթեթում կցված չէ հրավերով սահմանված լիցենզիան,որտեղ երևում է ընկերության լիցենզիայի դասը:
- Հավելված 1.1-ում մասնակցի անվանումը ,ինչպես նաև ղեկավարի պաշտոնը գրված չէ:
- Հավելված 2-ում ընկերության անվանումը թերի է գրված,կամ ոչ լիարժեք: **«4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ –ի փոխարեն գրվել է «4Ա ԿԱՊԻՏԱԼ»:**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝

- **հանձնաժողովը մերժում է այն հայտերը,որոնցում բացակայում է գնային առաջարկը,կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապասխան**:
-

Որոշվեց՝

- **Մերժել «4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտը:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին ,դրանց համապատասխան կազմված լինելու մասին:

(Արտակ Ստեփանյան)

հ/հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանությունը	Հայտի գնահատականը
2	**«Շինտեխնիկա» ՍՊԸ**	համապատասխանում է	Բավարար

6. Տեղեկատվություն «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով մրցույթի մասնակիցների իրական շահառուների հայտարարագրերի գնահատման վերաբերյալ:

(Արտակ Ստեփանյան)

Մասնակիցների իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոտոկոսից ավելիին տնօրինող մասնակիցները ներառված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում:

7. Ղեկավարվելով « Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով գնահատող հանձնաժողովը որոշեց

(Արտակ Ստեփանյան)

- ✓ **«ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/07»** ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի ամփոփման արդյունքում ընտրված մասնակից ճանաչել **«Շինտեխնիկա» ՍՊԸ -ին**:
- ✓ Հաշվի առնելով այն հանգամանքը,որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավել մասնակիցներ,ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր, **ավարտ՝ 01.06.2026թ.**:
- ✓ Տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Նախագահ՝ _____ Ա.Ստեփանյան/ԳԱՊ/

Անդամներ՝ _____ Վ. Գաբրիելյան/ԳԱ/

_____ Հ. Արամյան/ԳԱ/

Քարտուղար՝ _____ Լ.Մարկոսյան/ԳՀ/